

Գենիս Գավիգովը, մեծ գրող Գրիբոեդովը, արտրված զեկարրիստներ Լալիենովը, Բուրցովը, Պուշկինը, Կոնովնիցինը և շատ ուրիշներ:

«Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը» գեկուցումով հանդես եկավ պրոֆ. Վ. Պատսամյանը: Նա խոսեց 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի բնթացքի, Շուշու հերոսական պաշտպանության, Օշականի նախաամարտի, Նրևանի բերդի գրավման և հայերի անձնուրաց քաջագործությունների մասին:

Այնուհետև բնթերցվեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Վ. Ռշտունյու գեկուցումը՝ «Հայաստանի տնտեսական կյանքի զարգացումը 1830—1850 թթ.»։ Թուրքմենշայի հաշտության պայմանագրով Ռուսաստանի տիրապետության տակ անցած նրևանի և Նախիջևանի խանությունները, ինչպես նաև Օրդուբադի շրջանը 1828 թ. մարտի 21-ից մտնում են նոր կազմված «Հայկական մարզի» մեջ: Պատմական այդ ակտից հետո Հայաստանի տնտեսական կյանքը XIX դ. 30—50-ական թթ. զգալի չափով զարգանում է, սկսվում է ապրանքա-գրամական հարաբերությունների աշխուժացում:

«Ռուս-հայ գրական կապերը XIX դարի առաջին կեսին» թեմայով հանդես եկավ պրոֆ.

Ռ. Հովհաննիսյանը: Հայ ժողովուրդը, ասաց գեկուցողը, միշտ էլ հետաքրքրություն է հանդես բերել զեպի ռուս գրականությունը: Գենես XIII դարում Կիլիկիայում թարգմանվում է «Պատմություն Սուրբ Գավթի և Ռոմանոսի» երկը, որի մեջ փաստարանվում են եղբայրությունն ու միասնությունը, դատապարտվում դավաճանությունն ու վախկոտությունը: Հաջորդ գործը, որ թարգմանել են հայերը, Ֆյոդոր Ալեքսանդրովիչ էմիների «Խոստովանությունն» է: Հայ մտավորականները, հատկապես Լազարյան հեմարանի սաները, Մկրտիչ էմինը, Հարություն Ալամդարյանը և մյուսները հունի մեջ գրեցին հայ և ռուս գրական կապերը: Մկրտիչ էմինը գեուես Պուշկինի կենդանության ժամանակ թարգմանեց «Կովկասի գերիլն» և «Ռախիսարայի շատրվանը» պոեմները: Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության մեջ և գրականության ասպարեզում մեծ է Գրիբոեդովի գերը: Մեծ գրամատուրգը գրելու էր «Ռազամիս և Զենորիա» հայկական թեմայով ոգրերգությունը: Նրա գրամաները բեմագրվում էին հայկական բեմերում: Իրենց հերթին հայ գրողները, հատկապես Խ. Արովյանը, ռուս գրականությունն ու մշակույթը պրոպագանդել են հայ հասարակայնության մեջ:

Լ. ՄԱՐՏԶԱՆ

ՄԽԻԹԱՐ ՀՆՐԱՅՈՒ ՀՈՒՆԵԼՅԱՆԸ

Սովետական Հայաստանի գիտական հասարակայնությունը, բժշկության բնագավառի աշխատողները նշեցին միջնադարյան հայ ականավոր բժիշկ և բնագետ Մխիթար Հերացու ծննդյան 850-ամյակը:

Հորեկյանի առթիվ կենտրոնական և հանրապետական թերթերը բազմաթիվ հոդվածներ նվիրեցին Մխիթար Հերացուն: Հրատարակվեց բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆ. Ա. Կժոյանի «Մխիթար Հերացի» գրքույկը հայերեն և ռուսերեն լեզուներով: Լույս տեսավ նաև Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարություն» աշխատության ռուսերեն նոր հրատարակությունը: Հայկական ՍՍՀ առողջապահության մինիստրության և նրևանի բժշկական ինստիտուտի նախաձեռնությամբ կազմակերպվեց Հերացուն նվիրված մեծ ցուցահանդես:

Նոյեմբերի 11-ին նրևանում տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի, առողջապահության մինիստրության գիտա-բժշկական խորհրդի, պետական համալսարանի, Մատենադարանի, բժշկական ինստիտուտի և բժշկական գիտական ընկերությունների միացյալ գիտական նստաշրջանը՝ նվիրված Մխիթար Հերացուն:

Նստաշրջանին մասնակցում էին նաև Մոսկվայից, Լենինգրադից, Կիևից, Օդեսայից, Ռիգայից, Թբիլիսիից, Բաքվից և այլ քաղաքներից ժամանած բազմաթիվ գիտնականներ:

Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Բ. Առաքելյանը «Մխիթար Հերացու ժամանակաշրջանը» թեմայով գեկուցման մեջ հանգամանորեն կանգ առավ միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքում տեղի ունեցած տեղաշարժերի վրա, որոնց ծնունդն էր, իր բազմաթիվ նշանավոր ժամանակակիցների հետ, նաև Մխիթար Հերացին: Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆ. Ա. Կժոյանը «Միջնադարի ականավոր հայ բժիշկ Մխիթար Հերացին» գեկուցման մեջ Հերացուն բնութագրեց որպես միջնադարյան Հայաստանում զարգացող ինքնատիպ բժշկական մշակույթի ականավոր ներկայացուցիչ, իր ժամանակաշրջանի տեսական ու կիրառական բժշկականության համարձակ նորարար: Նշելով Հերացու «Ջերմանց մխիթարություն» աշխատության դերը հայ և համաշխարհային բժշկագիտության մեջ, գեկուցողը ըստ արժանվույն գնահատեց Կ. Նեյմանի, է. Զեյդելի,

Լ. Շուրանի, Վ. Թորգոմյանի, Լ. Հովհաննիսյանի ծառայությունները վերահիշյալ աշխատության ուսումնասիրման և գնահատման գործում:

«Հիգիենայի մի քանի հարցերը Մխիթար Հերացու և նրա ժամանակակիցների աշխատություններում» գեկուցման մեջ ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Լ. Հաբուսյունյանը ցույց տվեց, որ միջնադարյան Հայաստանում մեծ տեղ է տրվել սննդի կազմակերպման և ջրամատակարարման աշխատանքներին, հատուկ բժշկական հիմնարկների ստեղծմանը, ինչպես նաև հիվանդությունների կանխարգելման, վարակիչ հիվանդանքների մեկուսացման և վարակի տարածման ուղիների ուսումնասիրման հարցերին:

«Մխիթար Հերացու փիլիսոփայական հայացքները» գեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Վ. Չալոյանը, որը կանգ առավ Հերացու աշխարհայացքի առանձնահատկությունների վրա: Մխիթար Հերացու ձեռագիր աշխատություններին էր վերաբերում Մատենադարանի գիտաշխատող Ս. Լալաֆուրյանի գեկուցումը: Որոշակի հետաքրքրություն էր ներկայացնում նաև Ս. Վարդանյանի «Աչքի անատոմիան ըստ Մխիթար Հերացու և Աբու Սաիդի» թեմայով գեկուցումը:

Գիտական նստաշրջանի հաջորդ օրը երեւանի Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ մեծ բժշկապետին նվիրված հանդիսավոր նիստ, որին մասնակցում էին Հայաստանի կոմունիստական կուսակցության և կառավարության ղեկավարները, գիտության և մշակույթի ականավոր գործիչներ, եղբայրական հանրապետությունների պատվիրակներ, մայրաքաղաքի առողջապահության և բժշկագիտության ասպարեզի աշխատողներ, ուսանողներ: Հանդիսավոր նիստը ներածական խոսքով բացեց հորեւլյանական հանձնաժողովի նախագահ Լ. Ստեփանյանը:

Մխիթար Հերացու կյանքի և գործունեության մասին գեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ առողջապահության մինիստր Չ. Նաբիմանովը: Խոսելով մեծ գիտնականի մասին, նա նշեց, որ Հերացու ծառայությունները հայ ժողովրդի և բժշկագիտության առջև այնքան մեծ էին, որ ժամանակակիցները նրան կոչում էին «Մեծ բժշկապետ», «Իմաստուն բժիշկ» և «Մեծ Մխիթար»:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադ. Վ. Համբարձումյանը, բարձր գնահատելով Մխիթար Հերացու ծառայությունները հայ մշակույթի ասպարեզում, նշեց, որ մեծ գիտնականը, ապրելով միջնադարյան ժանր ու մղձավանջային պայմաններում, իրեն դրսևորել է գիտնականին վայել այնպիսի անհրաժեշտ

հատկություններով, որոնք այսօր պահանջվում են ժամանակակից գիտնականներից:

Բժիշկ-պատմաբանների համամիութենական գիտական ընկերության նախագահ Բ. Պետրովը (Մոսկվա) իր ելույթում նշեց, որ Մխիթար Հերացու հորեւլյանը տոն է, որը դուրս է գալիս Հայաստանի սահմանից, որ Մխիթար Հերացին միայնակ չէր միջնադարյան Հայաստանում և նրա հանճարեղ աշխատությունը պատահաբար հաջողված ստեղծագործություն չէր: Հերացին հայկական գիտության հզոր լեռնաշղթայի գագաթներից մեկն է, — ասաց նա, — որն իրավամբ համաշխարհային մեծություն է և պետք է, որ նրա մասին իմանան Միության սահմաններից դուրս: Գերոնտոլոգների անդրկովկասյան ընկերության նախագահ Դ. Պիգիլեւսոնին, խոսելով Մխիթար Հերացու ծառայությունների մասին, նշեց, որ հայ ժողովուրդը կարող է հպարտանալ, որ աշխարհին տվել է բժշկական մտքի այնպիսի հսկա, որի անունը կանգնած է աշխարհի խոշորագույն բժիշկների շարքում:

Հորեւլյանական նիստում ելույթներ ունեցան նաև ՍՍՀՄ ԲԳԱ ակադեմիկոս-քարտուղար Վ. Սոլովյովը (Մոսկվա), ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Լ. Խաչիկյանը, Մ. Շենգելիան (Թբիլիսի), Լ. Նաչաֆովը (Բաքու), Հ. Գաբրիելյանը (Երեւան), Վ. Սաղաուսկասը (Կաունաս), Յ. Գրիգորաշը (Ռիգա), է. Վասիլեր (Կիև), Յու. Լիսիցին (Մոսկվա):

* * *

Դեկտեմբերի 9-ին ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիան Մոսկվայում կազմակերպեց հանդիսավոր երեկո՝ նվիրված Մխիթար Հերացու ծննդյան 850-ամյակին:

Բացելով երեկոն, ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Տիմակովը խոսեց այն մասին, որ հայ ժողովրդի տաղանդավոր ներկայացուցիչներից մեկի՝ Մխիթար Հերացու աշխատությունները մեծարժեք ավանդ են բժշկագիտության և բնագիտության համաշխարհային գանձարանում:

«Մխիթար Հերացին և առողջապահության նրավաճումները Սովետական Հայաստանում» գեկուցումով հանդես եկավ ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Լ. Հաբուսյունյանը: ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, պրոֆ. Բ. Պետրովը իր ելույթում Հերացուն քննադրեց որպես միջնադարի նշանավոր գիտնականի: «Աչքի անատոմիան ըստ Մխիթար Հերացու և Աբու Սաիդի» հարցին էր նվիրված Մատենադարանի աշխատակից Ս. Վարդանյանի հաղորդումը:

Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ